ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2023 թվականի N 1143 - Լ

ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել սպանդանոցների կողմից գյուղատնտեսական կենդանիների մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի շրջանակներում բյուջետային երաշխիքների տրամադրման կարգը (այսուհետ՝ կարգ)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) բյուջետային երաշխիքները կարող են տրամադրվել առանց ապահովման լրացուցիչ միջոցների.

2) շահառուի կողմից իրականացված վարկի հիմնական գումարի մարումներն առաջնահերթ ուղղվում են բյուջետային երաշխիքներով ապահովված պարտավորությունների մարմանը.

3) սպանդանոցային գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուի գյուղատնտեսական կենդանիների մթերումների (գնումների) ուղղության համար բյուջետային երաշխիքները տրամադրվում են առավելագույնը 17 ամիս մարման ժամկետով.

4) բյուջետային երաշխիքների հիման վրա վճարման պահանջ կարող է ներկայացվել վարկի գծով 90 օր և ավելի ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ մինչև բյուջետային երաշխիքի ժամկետի լրանալը.

5) յուրաքանչյուր շահառուին և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի բյուջետային երաշխիքների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 14.0 մլն դրամը.

6) ծրագրի շրջանակում բյուջետային երաշխիքի տրամադրման պարտադիր նախապայման է ձեռք բերվող գյուղատնտեսական կենդանիների համարակալված լինելը և գյուղատնտեսական կենդանիների գնման գործընթացից հետո դրանց ապահովագրումը:

3. Սույն որոշումը գործում է ուժի մեջ մտնելու պահից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ